# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

## ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010, ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3
www.minurban.am, E-mail: info@minurban.am

19.10.2017թ. N 02/16.3/129523-17

«ԲԻ-ԷՄ բիզնես ինդեքս» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության տնօրեն
պարոն Արսեն ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ
հասցե՝ ք. Երևան, Թումանյան 27
էլ. հասցեն՝ srba1@rambler.ru

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և «ԲԻ-ԷՄ բիզնես ինդեքս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2017 թվականի ապրիլի 14-ին կնքված՝ Պետության կարիքների համար մաքրման ծառայությունների մատուցման N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/13 պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների համաձայն Ձեր ընկերությունը պարտավոր էր մատուցել 300 000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով մաքրման ծառայություններ:

Ղեկավարվելով «ՀՀ քաղաքացիական օրենսգրքի» 467 հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Ձեր կողմից ներկայացված 2017 թվականի հոկտեմբերի 16-ի N5/12083-17 գրությունը և Պայմանագրի 2.4.3 կետը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 2017 թվականի հոկտեմբերի 20-ից միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Առդիր՝ 4 էջ:

Հարգանքով՝

Արամ ՄԿՐՏՉՅԱՆ

Ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության պետ Աշոտ Բաբայան
011-621-727

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի
աշխատակազմի ղեկավար
պարոն Արամ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

16.10.2017թ.

Հարգելի պարոն Մկրտչյան

Հիմք ընդունելով ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Բի-էՄ բիզնես ինդեքս» ՍՊԸ-ի միջև կնքած՝ Պետության կարիքների համար մաքրման ծառայությունների մատուցման 2017թվականի ապրիլի 14-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՀԾՁԲ-17/13 պետական գնման պայմանագրի 2.4.3 կետը՝ հայտնում եմ, որ պայմանագրային պարտավորությունները չեմ կարող կատարել, քանի որ կազմակերպությունը սնանկացման գործընթացի դատարանի վճռման փուլում է:

«Բի-էՄ բիզնես ինդեքս» ՍՊԸ-ի տնօրեն՝ Արսեն Բարսեղյան

ՀՀ ԿԱ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ,
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
N 5/12083-17
16 10 2017թ.